

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>«ՕՐԵՆՔԻ ՊԱՇՏՊԱՆ» մեդալ Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապողակով ամրացված մեդալից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կապույտ մետաքսյա ժապավենով, որի մեջտեղի հատվածում 8մմ լայնության վրա 2-ական 2մմ լայնությամբ սպիտակ երիզներով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները նույնն են՝ 39 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 28 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերին մասի կենտրոնից մինչև ներքին գագաթը 50 մմ է: Կախիչը հակառակ երեսում ունի հատուկ ամրակ՝ պարզևատրվածի հագուստին ամրացնելու համար: Մեդալն իրենից ներկայացնում է շրջան, որի դիմերեսի եզրագծով շրջանաձև պատկերված է իրար միահյուսված շեղանկյունաձև զարդանախշ: Այն պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից և ոսկեպատված է 999 հարգի ոսկով: Մեդալի տրամագիծը 38 մմ է: Մեդալի դիմերեսի ներքին շրջանագծի եզրագծի երկայնքով կորածև ուռուցիկ տառերով գրված է «ՕՐԵՆՔԻ ՊԱՇՏՊԱՆ» բառերը: Ներքին շրջանագծի կենտրոնում պատկերված է ՀՀ դատախազության գինանշանը՝ Էմալպատված եռագույն Էմալով, ներքևի հատվածում դափնեպսակով: Մեդալի դարձերեսին կա գրվածք «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ» և ուղղանկյուն շերտիկ՝ հերթական համարը գրելու համար: Մեդալների միանմանությունը ապահովելու համար այն պատրաստվում է հատուկ տեխնոլոգիայով և դրոշմման ճանապարհով: Մեդալի շերտածողի չափերն են 24x12մմ: Շերտածողի ժապավենը կրում է մեդալի ժապավենի գունային նկարագիրը: Տուփի չափսերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից,</p>

քաշը՝ 120գ/մ2 երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում մեդալի չափսերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեդալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ դատախազության լոգոտիպի UV տպագրություն: Տուփի գույնը և մեդալի տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	